ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերը

Ուսուցիչ՝ Մարիամ Սահակյան

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն…….....էջ 3

Գլուխ Ա

Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերի ուղեծրում. «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» վեպը…….....էջ 6

Գլուխ Բ

«Չարենցի կրակոցը» կենսագրական վեպը ……էջ 28

Եզրակացություն……...էջ 42

Օգտագործված գրականության ցանկ……...էջ 44

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

…Որ կյանքում հաճախ այնպես է լինում,
Երբ սիրողները դեռ ողջ են, առողջ,
Իսկ սերը նրանց դառնում է լեգենդ
Եվ…ապրում կյանքով հազարապատիկ…
Պ. Սևակ

Արդի գրականության ուղեծրում իր գրական ճանապարհն է արգասավորում արձակագիր ու փաստավավերագրական վեպի նշանավոր ներկայացուցիչ Հ. Չարխչյանը, ով իր գրականությամբ ի հայտ բերեց նյութի ընդգրկման նկատելի բազմազանություն: Արձակագրի համար գլխավոր խնդիր է դառնում վավերական հավաստիություն ունեցող նյութի յուրացումը, ինչը հաղորդում է նրա խոսքին դիպաշարային զարգացում ու փաստավավերագրական բնույթ: Հ. Չարխչյանի արձակում նոր շունչ ու բովանդակություն ստացավ կենսագրական վեպը, որի էջերում մարդախուզության ճանապարհով արձակագիրը հայտնաբերեց իրական մարդու մեջ ապրող ներքին մարդուն, որի հոգեբանական մանրակրկիտ վերլուծությունն էլ վավերական լույսի տակ դարձրեց իր առաջադիր գլխավոր նպատակը:

Հ. Չարխչյանի անունը գրական շրջանակներում լայնորեն հայտնի դարձավ 2004 թվականին տպագրված «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» երկհատոր վեպի շնորհիվ, ապա լույս տեսավ «Սևակի մահվան առեղծվածը» /2005/ գիրքը, որն ուղղակիորեն կապված է նախորդի հետ, սակայն գրված է առավելապես վավերական հետազոտության եղանակով՝ բացահայտելու համար մեծ բանաստեղծի մահվան առեղծվածը:

Կենսագրավեպերն առանձնանում են իրենց դաստիարակիչ նշանակությամբ, նշանավոր մարդու օրինակով մարդուն մարդ պահելու, մարդու ուժը ներկայացնելու շնորհիվ: Ժամանակակից հայ կենսագրական վեպը ևս զարգացող ժանր է և փոփոխությունների է ենթարկվել: Հարցի հետազոտության համաձիրում ուսումնասիրել ենք «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» և «Չարենցի կրակոցը» կենսագրական վեպերը:

Ի դեմս Հ. Չարխչյանի մենք գործ ունենք վավերագրող-վիպասանի ստեղծագործական խառնվածք ու նախասիրություն ունեցող անհատականության հետ: Նախ՝ նկատենք մի կարևոր առանձնահատկություն. Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» և «Չարենցի կրակոցը» վեպերը ոչ թե մեր մեծ բանաստեղծների ողջ կյանքն են ներկայացնում /ծննդից մինչև մահ/, այլ նրանց կյանքի կարևոր դրվագները, կենսապատումի գլխավոր հանգրվաններից մի քանիսը: Հ. Չարխչյանը գրել է նաև Պ. Սևակի գեղարվեստավավերագրական կենսապատումի շարունակությունը՝ «Սևակի մահվան առեղծվածը» /Երևան, 2005թ./ վերնագրով. այն նախորդի հետ ուրույն կերպով ամբողջացնում է Պ.Սևակի կյանքի և մահվան մասին գրելու հեղինակի մտահղացումը: Հ. Չարխչյանի համար վավերական նյութը այնքան ծավալուն է եղել, որ նպատակահարմար է համարվել գրողների կյանքի մի նշանակալի ժամանակահատվածի սահմաններում ստեղծել նրանց իրական կեցության մասին պատկերացումներ, որոնց տիրույթում նրանք ներկայանում են և՛ որպես բանաստեղծ, ժամանակի ճանաչված մտավորական, և՛ իրական անձնավորություն՝ կենցաղային հոգսերով, զգացողություններով, մտահոգություններով, սիրով ու կրքերով: Վերոնշյալ երկերում պատկերված կենսապատումի դրվագները մեծ դերակատարություն են ունեցել մեր նշանավոր բանաստեղծների կյանքում և ստեղծագործության մեջ: Կարծում ենք, այս առումով ժամանակակից կենսագրական վեպի մի նոր տարատեսակի հետ գործ ունենք, որի նպատակներից մեկն էլ նորահայտ փաստանյութի օգտագործմամբ ժողովրդի մեջ մեծ համբավ ունեցող ու սիրված բանաստեղծների՝ վավերագրող-վիպասանի հայացքով դիտված, իրենց ապրած ժամանակաշրջանի կենսական իրադրություններում որոշակի նիստուկացով պատկերված գեղարվեստական կերպարները ստեղծելն է: Այս երկերում բացահայտվում են նաև նրանց ներաշխարհում և արարքներում երբեմն դրսևորված անսովորը, առեղծվածայինը, ենթագիտակցությամբ թելադրված հակասական վարքագծի հոգեբանական իմաստավորումները:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից գրականության համապատկերում ուշագրավ է Հ. Չարխչյանի գեղարվեստական արձակի ուսումնասիրությունը, նրա ստեղծագործական ինքնատիպ ոճը, միաժամանակ

կենսագրական վեպերում առանձին մանրամասների և փաստերի վերլուծությամբ ընդհանրացումներ անելը:

Հետազոտության նպատակը: Արժևորել Հ. Չարխչյանի գեղարվեստական արձակը, ներկայացնել նրա արծարծած խնդիրների ու հիմնահարցերի հրատապությունը մեր օրերում, ինքնատիպ սիրերգության արժևորումը մերօրյա իրականության մեջ:

Հետազոտության խնդիրը: Թեմայի ուսումնասիրությամբ բացահայտել հայ գրականության մեջ ստեղծագործական զուգահեռները:

Ուսումնասիրության փաստական նյութը: Հ. Չարխչյանի ստեղծագործությունները, դրանց վերաբերյալ եղած քննադատական նյութերն ու հոդվածները:

Ուսումնասիրության մեթոդները: Թեման ուսումնասիրելիս կիրառել ենք վերլուծության, նաև պատմահամեմատական ու և համադրության մեթոդները:

Կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, կցված է օգտագործված գրականության ցանկը:

Ներածության մեջ ներկայացնում ենք հարցի ընդհանուր դրվածքը, ուսումնասիրվածության աստիճանը, արդիականությունը, հիմնավորված է թեմայի ընտրությունը:

ԳԼՈՒԽ Ա

ՀՈՎԻԿ ՉԱՐԽՉՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԵՐԻ ՈՒՂԵԾՐՈՒՄ. «ՍՈՒԼԱՄԻԹԱ. ՍԵՎԱԿԻ ՄԵԾ ՍԵՐԸ»

Դու իմ վերջի՜նը՝ թյուրիմացաբար,
Եվ իմ միա՜կը՝ ճակատագրով…

Հայ գրականագիտության մեջ <<կենսագրական վեպի>>՝ որպես վեպի ժանրի ենթաժանրային տեսակի օրինաչափությունների մասին որոշակի ստեղծագործությունների առիթով խոսել են մի շարք գրականագետներ /Էդ.Ջրբաշյան, Ս.Արզումանյան, Ս.Աղաբաբյան, Հ.Թամրազյան, Ս.Սարինյան, Ժ.Քալանթարյան, Դ.Գասպարյան, Ս.Աբրահամյան, Ս.Դանիելյան, Ս.Մարգարյան/: Կենսագրական վեպի առանձնահատկությունները մեր պատկերացմամբ գործում են ամեն դեպքում վեպի ժանրի շրջանակում, որը քիչ թե շատ մշակված է: Իսկ այստեղ արդեն նկատվել է, որ այն ունեցել է և ունի ամենաբազմազան դրսևորումներ. քիչ է ենթարկվում որոշակի կանոնակարգման: Կենսագրական վեպի նորօրյա զարգացումներին ու տեսական ըմբռնումներին հայ ժամանակակից գրականության տեսաբաններից խնդրի արծարծմանն անդրադարձել է նաև գրականագետ Ժ.Քալանթարյանը [17, էջ 121-136]:

Մասնավորապես Հ. Հակոբջանյանի և Ալ. Թոփչյանի կենսագրական վեպեր գրելու փորձը նկատի ունենալով՝ նա առանձնացնում է գրականագետի և գրող-վիպասանի կողմից կենսագրական վեպ գրելու յուրահատուկ մոտեցումներն ու տարբերությունները:

Կենսագրական վեպերին բնորոշ դասական ավանդույթի համաձայն այս վեպերում ևս իր հերոսների կենսակերպի ու այլոց հետ հարաբերությունների պատկերմամբ հեղինակը պահպանում է անցյալի և նրանց ապրած ժամանակաշրջանի միջև գոյություն ունեցող կապերն ու այսօր էլ ընդունելի ազգային ու համամարդկային բարոյական արժեքները: Արդիականության հետ առնչությունները վեպերում ակներև է դառնում նաև ժամանակակից հայ մարդու ներսում և նրանից դուրս եղած քաոսի

հետ շփումներ ունենալու շնորհիվ: Մեր մեծ բանաստեղծների կյանքն ու կերպարներն այս առումով և' ընդհանուր եզրեր ունեն արդի հայ մարդու հետ, և' տարբերվում են իրենց անհատականության բացառիկությամբ:

Պ.Սևակի մասին Չարխչյանի վեպի առաջին գրքի՝ «Պարույր Սևակի կյանքի վեպը» վերնագրված իր խոսքում ճանաչված գրականագետ Դ.Գասպարյանը Չարխչյանի մեջ տեսնում է գիտնական վիպագրողի օժտվածություն, ով Սևակի կենսապատումի մեջ իր ուշադրությունը սևեռել է հատկապես անվանի բանաստեղծի՝ վավերական հիմքով ստեղծված «սիրո վեպին»: Այսինքն՝ գրականագետը «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» երկը իր ենթաժանրային տեսակով նույնպես կենսագրական վեպ է համարում, ուր պատկերված է առավելապես բանաստեղծի սիրո պատմությունը իրականի ու գեղարվեստականի միահյուսմամբ: «Այսպիսի փաստացի, բարեխիղճ ու ընթերցվող գրքեր,- գրում է Դ.Գասպարյանը,- մեր իրականության մեջ քիչ կան. սա լուրջ գիրք է, և նրա հեղինակը՝ Հովիկ /Հովհաննես/ Չարխչյանը, արժանի է ամենաբարձր գնահատանքի: Այստեղ նա իրեն դրսևորում է ոչ միայն որպես սևակասեր, այլև սևակագիր, ոչ միայն Սևակի կյանքի գաղտնիքների գիտակ, այլև հմուտ հետազոտող, ոչ միայն Սևակի կյանքի պատմության տարեգիր, այլև համարձակ ու աննախապաշար գրող-գրականագետ» [4, էջ 5]:

Չարխչյանին հատկապես մտահոգել է Սևակի և Սուլամիթայի միմյանց գրած նամակները հրապարակելու, դրանց միջոցով բանաստեղծի կյանքի պատումը ավելի հավաստի ու կենսաթրթիռ ելևեջներով պատկերելու և նրա սիրերգության աղբյուրները մատնացույց անելու գերխնդիրը: Դրա գլխավոր պատճառը, ինչ խոսք, մեծ բանաստեղծի հարազատների դժգոհությունն է. չէ՞ որ նրանց /և ոչ միայն նրանց/ պատկերացմամբ այդ նամակները վարկաբեկիչ կարող են լինել մեծ բանաստեղծի կերպարի համար: Սակայն, ինչպես հեղինակն է վկայում, դրանք հրապարակելու իրավունք նա ունեցել է այն հանգամանքի շնորհիվ, որ նամակագիրները /և՛Սևակը, և՛ Սուլամիթան/ համաձայն են եղել, որ իրենց նամակները տպագրվեն: Չարխչյանը «Սուլամիթա.Սևակի մեծ սերը» երկում ստեղծել է Պարույր Սևակի կերպարը՝ իբրև բուռն հրապուրանքներով ապրող և սիրո հզոր զգացմունքն իր ստեղծագործական

երևակայության ու զգացողությունների աշխարհում բանաստեղծությունների ու պոեմների վերածելու ինքնատիպ ընդունակությամբ օժտված բանաստեղծի:

Յուրաքանչյուր ազգի մեծ բանաստեղծն իր ապրած կյանքով և գրավոր ժառանգությամբ դառնում է իր ժողովրդի սեփականությունը: Ուստի նրա կյանքի և գործունեության, ստեղծագործության ուսումնասիրությունը ամենատարբեր այդ թվում նաև կենսագրական վեպ գրելու դիտանկյուններից կարևոր է, անհրաժեշտ և ուսանելի:

Անկեղծության և անմիջականության խոր վկայություն է Հ. Չարխչյանի գեղարվեստական արձակը, որի մեջ սիրո, մարդերգության մոտիվները միահյուսվում են ապրելու, արարելու անկոտրում կամքին՝ դառնալով հոգու յուրօրինակ ապաստարան:

Հովիկ Չարխչյանի յուրաքանչյուր ստեղծագործություն կերտված է հոգեբանական մի գյուտի հայտնաբերմամբ, որը դառնում է ստեղծագործությունների հերոսների ներաշխարհը ներկայացնելու հիմնական նախապայման: Աշխարհը լուսավորելու իր դեղատոմսը Պարույր Սևակը խտացնում էր սիրո մեջ: Պարույր Սևակն իր նամականու մեջ սիրո հարուստ և վսեմ այնպիսի վկայություններ է թողել, որոնք արժանի են համակողմանի ուսումնասիրության:

Մերօրյա իրականության մեջ Պարույր Սևակի սիրո նամականին կարող է ուղենիշ դառնալ՝ սիրո ինքնատիպ գեղագիտությամբ, ազնվությամբ ու քնքշությամբ, յուրաքանչյուրիս հաղորդակից դարձնելով սիրելու գեղեցիկ արվեստին: Սիրո այդ խոստովանությունները հետաքրքիր լինելուց բացի, միաժամանակ կարող են նաև իմաստության, անկեղծության դասեր տալ սիրո մեջ անհաստատ կամ անհամարձակ ընթերցողին: Պարույր Սևակը մարդկային հոգեբանության նուրբ ու խոր գաղտնիքները ճանաչող է: Սիրային նամակները՝ քնարական յուրատիպ շաղախով, կարծես լրացնում են իրար սյուժետային ներքին տրամաբանությամբ: Սկսվում և ավարտվում են հախուռն, գեղեցիկ: Պարույր Սևակը սիրո դրսևորման յուրատեսակ ոճ ունի, որը մնում է անկրկնելի: Անաղարտ, անխառն սիրո փառաբանումը գեղեցիկ ու անխարդախ կյանքով ապրելու նվիրական ձգտման արտահայտություն է: Սիրո մեջ գրողը ամենատես է, մանրամասների մեջ՝ ամբողջական, ամբողջության մեջ՝

անթերի։ Տող առ տող կարելի է վերականգնել և ճշգրիտ կերպով կենդանագրել սիրո հոգեբանական վիճակների հաջորդականությունն ու անցումները։ Գեղանկարի տեսանելիություն ունի յուրաքանչյուր նամակ։ Պ. Սևակը քնարական նուրբ շնչով հյուսում է սիրո ու սրտակցության փառերգություն՝ հոգեվիճակի տարբեր դիրքերից բացելով տրամադրության և ասելիքի նորանոր շերտեր ու նրբագծեր՝ այդ ամենն ի մի բերելով մի կայուն առանցքի շուրջ։ Ահա այդ զգացողությամբ էլ Պ. Սևակը հոգևոր կամուրջ է ստեղծում իր և ժամանակակիցներիս միջև։

Պ. Սևակի սիրերգության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ կենսագրական հավաստիություն ունեցող սիրո պատմության կողքին նա տեղ էր տալիս նաև պատահական սերերին, դիպվածական սերերին, օտար սերերին և փորձում որսալ այն կենսական թրթիռը, ինչը մեկ ակնթարթում կարող է տակնուվրա անել մարդու հոգին ու մարմինը («Անսպասելի փոթորիկ», «Օտար սիրո այբուբենը», «Սովորական հրաշք», «Երկու սիրո արանքում», «Գարնան վտանգավոր հոտը»)։ Սա այն պահն է, որ կյանքի այլ հանգամանքներում կարող էր տնօրինել մարդու ճակատագիրն ու կենսագրությունը, բայց անցնում է հպանցիկ, դառնում մեկօրյա թեթև ծանոթություն։ Այս պատահական թվացող պահը, հանդիպումը, առնչությունը չի դառնում տևական, որովհետև կա պարտականություն, կա օրինականացված կյանք, իսկ դրանից դուրս ամեն ինչ թվում է անօրինական. դուրս բարոյական ընդունված կարգուկանոնից։ Կյանքի հարուստ տարերքի մեջ բացված հոգու բռնկումն ու քաղաքակրթության պահանջները դրվում են կողք կողքի, դրանց մոտեցումից ծնվում է բախումը, որ կարող է երևալ կամ չերևալ։ Ու այդ պահից է, որ իր ճիչն է արձակում ծանր ու դժվարին ինքնախոստովանությունը («Այսպես չեն սիրում»).

Պարտականության ու սիրո միջև
Այդ ես եմ տնկված՝
Ուղեփակոցի գերանի նման…

Պատանի տարիների խանդաղատանքից սերն աստիճանաբար դառնում է դժվարին կյանքում ապրելու միակ ու անփոխարինելի հոգևոր նեցուկ։ Կյանքի քաոսն ու անորոշությունը կանգնում են մարդու առաջ, սիրո ճանապարհը դառնում է կեցության ճանապարհ։ Ժամանակի շրջապտույտի մեջ մարդը կորցնում է իր բարի հույսերի հրվանդանի ուղղությունը, և անորոշությունը ճահճուտի պես իր մեջ է

առնում ու կլանում գլուխը կախ, իր հոգսերի հետ ճանապարհ գնացող անցորդին: Անկայունության մեջ մարդն անզոր է պահպանել նաև իր սերը՝ իր միակ հենակետն այս երերուն հողի վրա: Ու ծնվում է ինքնակեղեքման հասցնող հաջորդ ճիչը («Հասարակ պահանջ»):

Արտաքուստ անաղմուկ, բայց ներքին լարումով ու հետևողական շարժումով է Հ. Չարխչյանը ստեղծում իր խոսքի գեղագիտությունը: Ժամանակի ընթացքում հստակվել ու ինքնուրույնացել են նյութը, նյութի ընկալման կերպը, նյութը վերարտադրելու սկզբունքը, խոսքի ընդգրկումը, կառուցվածքը: Զգացողության նրբությունն ու խորությունն ընկած է նրա բոլոր ստեղծագործությունների հիմքում: Յուրաքանչյուր ստեղծագործություն կերտված է հոգեբանական մի գյուտի հայտնաբերմամբ, որը դառնում է հերոսների ներաշխարհը ներկայացնելու հիմնական նախապայման: Այդ հոգեբանական գյուտերը, տարբեր լինելով բնավորությունների որևէ կողմը բացահայտելու դիտանկյունից, ամբողջության մեջ ունեն մի քանի ընդհանրություններ. դրանք առնչվում են բռնկուն, ինքնամոռաց էությանը, խոսքի ու որոշման մեջ, համառ ու հետևողական լինելու անզիջողությանը, մյուս կողմից և միաժամանակ իրենց գոյությունը որպես ժողովրդի պատմության շարունակություն համարելու զգացողությանը, իրենց գոյությունը ժողովրդի պատմությամբ իմաստավորելու բնական տարերքին: Ե՛վ անցյալի դեպքերի ու գործողությունների շղթան, և՛ ներկա պահը Հ. Չարխչյանի ստեղծագործության մեջ պատկերված են այնպիսի հաջորդականությամբ ու ներթափանցումներով, այնպիսի բնականությամբ, որ վիճակի արտասովորությունը վերածվում է բռնկուն ոգեղենության և ավելի պայծառ լույսով լուսավորում հերոսների թաքուն մտքերն ու ապրումները, միանգամից բացում նրանց կյանքի գաղտնիքները: Ըստ Հ. Չարխչյանի՝ հայ ժողովուրդն իր լինելիությունը պահպանում է ոչ միայն հերոսամարտերով ու մաքառումներով, այլև իր ստեղծագործական հարուստ ուժերի բարգավաճման, գեղեցկությունների պաշտամունքի, բնավորության լայնախոհության, վերաշինման, աշխարհազգացումի ճանապարհով:

Հոգևոր բոլոր չափումների մեջ դիտվող մարդը, բնականաբար, պիտի երևար նաև իր ներաշխարհի անհատական նախասկիզբ ունեցող այնպիսի նուրբ վիճակների մեջ, ինչպիսիք են սերը և սիրո հետ առնչվող բոլոր ապրումները: Սևակյան

սիրերգությունը ոչ թե «գեղեցիկ» գեղգեղանք է, այլ մարդու ներքին նկարագիրը բացահայտող կարևոր նախադրյալ, մարդուն մարդ պահող հզոր ուժ.«Էջեր: Բազմաթիվ: Բազմազան էջեր: Արդեն խունացած: Արդեն ծերացող: Տողեր, որ գրվեցին հաջորդ օրերին, մեկ ամիս հետո, մեկ տարի հետո: Եվ քսան տարի անց…Բառեր, որ հնչում են այսօր ու դեռ կհնչեն: Ի՞նչ անուն գտնել հիշողություններ կոչվող-չկոչվող խոհերի համար»[10, էջ 409]:

Բայց կյանքը կյանք է նաև կասկածանքներից փրկված այս հավատարմության մեջ, և երանության պահը դառնում է կարոտների հանգրվան, գիշերը ծանրանում է նրա անունով ու նրա բացակայությամբ, և այդ ամենը դառնում է կյանք. «Եվ ինչ էլ լինի, ժամանակի գետն ինչպես էլ փոխի հունը ընթացքի, ցանկությունները որքան վիճեն փաստարկների հետ, դարձյալ ու նորից հեռու Թել Ավիվում ապրող այդ անծանոթ կինը մեզ համար մնալու է երիտասարդ ու գեղեցիկ Սուլամիթա: Մնալու է նա, ով վաստակել է սիրով և անվամբ Պարույր Սևակին հիշեցնելու իրավունքը» [10, էջ 428]:

Գրականագետ Դ. Գասպարյանի հավելումով. «Այս կախարդանքն է, որ կյանքը կյանք է դարձնում, և այդ կախարդանքը կա այնքանով, որքանով կա սերը, որովհետև սիրուց դուրս ամեն ինչ զուր վատնված ջանք է» [4,146]:

Հ. Չարխչյանը խոսքը զարգացնում է վիպական պատումով և նկարագրում ընտանեկան–ամուսնական, սիրային հարաբերությունների մի պատմություն, որոնք ոչ թե հնարածին էին, այլ իրական: Սերը՝ որպես հոգու պատմություն, շարունակվում է՝ դրսևորվելով մե՛կ որպես ապրում, մե՛կ որպես խոհ, մե՛կ որպես որոշակի վիճակների մեջ գտնվող անհատի կենսագրություն: Հ. Չարխչյանը, կարելի է ասել, ոսկերչական աշխատանք է կատարել մանրամասների, նրբագծերի, առանձին դրվագների «կառույցները» խորաքանդակների շոշափելիության հասցնելու համար: Պ. Սևակը, ամենից առաջ, մարդ է՝ իր թուլություններով ու առավելություններով, մարդ-արարածին հատուկ կրքերով ու բնազդներով: Ե'վ գործողությունների, և', մանավանդ, ներքին մենախոսության հնարանքներով վիպասանը հերոսի մեջ բացում է մարդուն, բացում է հորձանք առ հորձանք: Նրան մերթ տեսնում ենք իր անզուսպ ու մոլեգին զայրույթով, մերթ փոքր ուրախություններից մանկական հրճվանք ապրելիս, մերթ իր ցանկությունների մեջ կամակոր ու անզիջում: Հ. Չարխչյանի Պ. Սևակը

խառնվածքով դյուրաբորբոք է, զգայուն, կրակոտ, սկզբունքների ու դիրքերի մեջ աննահանջ:

Պ. Սևակի սիրային ստեղծագործության նյութը քաղված է իր կյանքի ամենաերջանիկ ու անմոռանալի էակի՝ իր «սիրո մեղրահյութի»՝ Սուլամիթա Ռուդնիկ առեղծվածի հետ: Պ. Սևակն ու Սուլամիթա Ռուդնիկը ծանոթացել են Մոսկվայում, ամենայն հավանականությամբ՝ 1957-ին, երբ բանաստեղծը, ավարտելով Գորկու անվան գրական ինստիտուտը, նույն հաստատությունում շարունակում է աշխատանքը՝ որպես թարգմանական ամբիոնի ավագ դասախոս, իսկ Սուլամիթան այդ տարի ընդունվել էր նույն ինստիտուտը: Նույն այս թվականի դեկտեմբերին Սևակն սկսում է գրել «Երգ երգոց» պոեմը, որի հերոսները ինքն ու Սուլամիթան են: Բայց նրա պատկերած դեպքերը չեն վերածվում փաստերի սոսկ վերարտադրության: Դրանք դառնում են տողեր, որոնք ընթերցողի աչքերի դիմաց սփռելու են մի ամբողջ կյանք և հոգեկան ապրումների լիակատար շղթա: Տրտմությունն էլ, տառապանքն էլ մարդու համար են, սիրո մեջ էլ տառապանք կա և, ընդհանրապես, ամենն էլ տառապանքից է ծնվում, չէ՞ որ մարդն էլ տառապանքով է ծնվում, բնությունն էլ երկնում է ցավով, սերը տանջանք է, հրճվանքը՝ դիմակ, արհամարհանքը թույն է, ապրելը՝ դանդաղ մեռնել: Ով երբևէ չի ճանաչել տառապանքը, նա չի ապրել: Եվ այդ կարոտի տառապանքը պիտի ծներ այն հանճարեղ գործերը, որոնք անուրանալի լույսի շողեր են: Ասում են, թե երջանկությունը հարմար հող չէ արվեստի ծաղկման համար, թե այն ծաղիկ է, որի արմատները աճում են տառապանքի մեջ: Սակայն Սևակն իր մի շարք քերթվածներով պիտի գա հակասելու այս կարծիքը. չէ՞ որ մի շարք հանճարեղ, սիրակեզ ու սիրագորով բանաստեղծություններում արտացոլվել է բանաստեղծի անբիծ ու անմնացորդ սերը, որը մեծ երջանկություն է ծնել հեղինակի սրտում: Բանաստեղծը ստեղծել է երգեր, որոնք խոսում են մարդու ամենաարթուն երազանքների հետ: Ընդհանրապես, եթե գրողը ցանկանում է, որ իր երկն ապրի ժողովրդի մեջ, պետք է կարողանա մտնել ընթերցողի սրտի և հոգու ամենանուրբ խորքերը:

Սուլամիթան Լիտվայից էր, ծագումով՝ հրեա: Սևակի հետ նրա մտերմությունը տևել է մի քանի տարի, նամակագրությունն՝ ավելի երկար: Երկուսն էլ թանկ էին գնահատում իրենց մտերմությունը: 1959թ. Հունվարի 13-14-ին գրած նամակում

Սուլամիթան խոստովանում է. «Անչափ սիրում եմ քեզ, յուրաքանչյուր մանրուքով գամված եմ քեզ՝ լինի թաշկինակ, տետր, ծաղիկ կամ պարզապես քո ծխախոտի մոխիրը…» [11, էջ 311]:

Սևակի մահից հետո թե՛ Հայաստանում, թե՛ Մոսկվայում Սուլամիթան հանդիպել է գրողի մտերիմներին, նրա գրական շրջանակի մարդկանց և, Իսրայել վերջնական բնակության մեկնելուց առաջ, նրանց հանձնել իր մոտ մնացած մասունքները: Այդ թվում՝ ամենաթանկը՝ անձնական նամակագրությունը, նաև՝ մի ընդհանուր տետր, որի մեջ Սևակը նրան հայերեն է սովորեցրել: Յուրացնելով հայոց այբուբենը՝ Սուլամիթան Սևակին նամակներ է գրել հայատառ ռուսերեն [4, էջ 160]:

Այս գեղեցիկ ու տխուր սիրո պատմությունը հիմնավոր տեղ ունի Սևակի անձնական կյանքում և ստեղծագործության մեջ:

Նամակի արքայի, սիրո վիհերի ճանապարհին սիրտը վերագտած ազնվայրի՝ Պարույր Սևակի ստեղծագործական աշխարհի ամենաարժեքավոր ժառանգության մի մեծ բաժին կապված է նրա կյանքի շրջադարձային ժամանակահատվածներից մեկի՝ մոսկովյան տարիների հետ: Սերը մարդկային իր բոլոր դրսևորումներով և պոռթկումներով ներկա է եղել նրա կյանքում, և հենց այս հոգին տանջող ցավն է ծնունդ տվել «Երգ երգոց» պոեմին և սևակյան սիրո մյուս հզոր գործերին:

Աշխարհը լուսավորելու իր բանաստեղծական դեղատոմսը Պարույր Սևակը խտացնում էր սիրո մեջ: Հայ գրողներից քչերն են սիրո հարուստ և վսեմ այնպիսի վկայություններ թողել իրենց նամականու էջերում, ինչպես Պարույր Սևակը:

Հ. Չարխչյանի «Սուլամիթա Սևակի մեծ սերը» սիրավեպի հերոսներն ասես մեկ զգացումի, մեկ հիմնական նվիրումի համար ծնված լինեն: Այդ հիմնականը սիրո զգացումն է, որը վեպի հիմնական կորիզն է: Հեղինակի խոսքը պտղակալում է այդ կորիզի շուրջը: Այս ուղղվածությամբ հանդերձ վեպը մեծ ընդգրկում ունի և իր փակագծերի մեջ խտացնում է մի ամբողջ կյանքի, նաև մի ամբողջ ժամանակաշրջանի պատմություն: Դրվագ առ դրվագ հյուսվում է սիրավեպը, իսկ արձակագիրը կարծես դառնում է նրանց սիրո պատմության տարեգիրը: Հ. Չարխչյանի ներշնչանքի ազդակը անսովոր գյուտն է: Նրան գրավում են տարբերվող և առանձնահատուկ ճակատագրի տեր անհատականությունները, որոնք էլ կյանքի նախատիպերից վերածվում էին գրականության հերոսների: Այդ առանձնահատուկը ինքնաձին չէ, այն ևս

բնութագրական պայմանների ու վիճակների արգասիք է: Այսինքն՝ ամեն ինչ գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ, որի կարևոր գործոններն են կյանքը, մարդը, իրականությունը: Ազատ էությունը, առավել ևս ստեղծագործ անհատականությունը ազատ է բոլոր սահմանափակումների մեջ, թեև այդ ազատության համար կարող է կյանքով վճարել:Պ. Սևակը ներքին պատասխանատու ազնվության կրողն էր, ինչն էլ անազատ պայմաններում նրան դարձնում էր ընդդիմության բանաստեղծ:Այդ ներքին ազնվությունը նրա սիրային գործերում էլ արտահայտվեց որպես գեղագիտություն, որպես խոսքի թարմություն և նորարարություն:Պ. Սևակին ուղենիշ էր իրական կյանքը՝ գրականության բուն աղբյուրը, իսկ Հ. Չարխչյան արձակագրի համար չափանիշ էր Պ. Սևակի իրական կյանքը՝ իր անձնական ապրված բոլոր էջերով: Ստեղծագործ անհատը, ինչպես բնության յուրաքանչյուր ստեղծագործություն, ժամանակի ընթացքում հայտվում է գեղագետի ուշադրության կիզակետում: Կաղնու սերմից կաղնի է աճում, ոչ թե մացառ: Թուփ դառնալու համար ծնվածը երբեք կաղնի չի դառնա: Պ. Սևակի խոսքը վարար հորձանքով որպես հոգուց քամվող տեղատարափ անձրև, որպես ջրվեժի հոսանք հուժկու ալիքով շքեղորեն իջավ սիրային մոտիվներով հյուսված երկերում: Պ. Սևակը ժամանակի մեծ տագնապներից առաջացած ու տագնապներ գուժող հարցականներում բոցավառեց սիրո անմար ու ապրված մի հրդեհ՝ միջնադարյան տաղերգությանը համահունչ արտահայտչական ձևերով ու միջոցներով: Ահա այդ հրդեհն էլ կենսագրական վեպի շրջանակներում ներկայացրեց Հ. Չարխչյան արձակագիրը՝ մեզ ներկայացնելով Պ. Սևակի բարդ ու համադրական կերպարը՝ մտածողության նոր համակարգով, շրջանառելով գեղարվեստական պատկերի ու չափածո խոսքի նոր ինքնատիպ համակարգ:

Սիրող հոգիների տևական պատմություն է կենդանագրում Հ. Չարխչյանը: Սիրո ազատությունը, այն էլ անձնական կյանքի ազատությունը գաղտնիքի մեջ է, բայց այս պարագայում այդ գաղտնիքը բոլորինն է, որ մեծերի օրինակով միայն կարելի է բացել և մնացածների համար դարձնել խոստովանագիրք: Մեծը դուրս է կենցաղի ձգողականությունից, կենսագրության փաստական պայմանավորվածությունից: Պ. Սևակի սերը ոչ թե դավաճանություն է իր կյանքում գրանցված անձնավորության հանդեպ, այլ հավատարմություն է սիրո անմար զգացմունքին, իր ներքին ազատության տարերքին, ինքը իրեն, իր հարաճուն անսպառությանը:

Հ. Չարխչյանի «Սուլամիթա Սևակի մեծ սերը» սիրավեպը Պ. Սևակի մասին է, նրա Սիրո մասին, մեծ անհատականության ու ՄԵԾԻ մասին. «պարույրը բառերն էր ընդգծում՝ իբրև հաստատակամ ու անվիճելի վճիռ… Դժվար էր խոստովանել, որ սարսափում էր բացվող օրից, եթե այն պիտի նման լիներ նախորդին: Խուսափում էր քայլերից, եթե դրանք կարող էին տանել անծանոթ ճամփաներով: Եվ ատում էր անգիտությունը, քանզի փոխարենը ստիպված էր իմանալ մեկ այլ ճշմարտություն. Կյանքը շարունակվում էր անվարան…»[11, էջ 317]:

Ու հենց սկզբից հեղինակային մտահղացման անմիջականությունն ու հստակությունը բացում են մեր առջև յուրովի մի աշխարհ՝ հուզումներով ու տագնապներով, կարոտներով ու սպասումներով, մարդկային տարբեր հոգեբանությունների, տարբեր անհատականությունների աշխարհը: Այս հարաբերությունների մեջ հեշտ է նկատել Չարխչյանի ստեղծագործության էական հատկանիշը՝ հակումը դեպի հոգեբանական վերլուծությանը:

Հ. Չարխչյանին օտար են կերպարի կերտման «անցյալդարյանի» մոտեցումները, ներկադարյանի որոշ գծեր նույպես: Նա մարդուն չի պատկերում այնպես, որ տեսնեն և շոշափեն, այլ ասես երաժշտության է վերածում, որ լսելով զգան: Նրա հերոսների ներքին ու արտաքին նկարագրի մեջ չպետք է «կերպարի», «տիպի» կանոնական բովանդակություն որոնել՝ զգացումունքների և տրամադրությունների, վիճակների և ճակատագրերի ուժեղ հակադրություն, փոխհարաբերությունների, նպատակների գլխապտույտ ընթացք, ապրելակերպի ու հոգեբանության, զբաղմունքի և հնարավորության արագ սպառում, դիմագծի, բնավորության ծայրահեղ սրվածություն, այնպիսի լարվածություններ, որոնց բախումը ստեղծում է վերապատմվող սյուժետային գիծ: Հ. Չարխչյանը բոլորովին այլ միջոցներով է հասնում այդ արդյունքին: Նա անձնական կյանքից չի վերցնում նույնիսկ մոխիրը, ինքն է ներկայացնում փոքրիկ խարույկ մի վառելանյութից, որ մինչև Հ. Չարխչյանը չի նկատվել որևէ մեկի կողմից: Եվ ահա Հ. Չարխչյանը հայ ընթերցասեր հասարակությանը ամեն անգամ ներկայանում էր իր յուրատիպ և ինքնօրինակ ձեռագրով: Գրախանութների ցուցափեղկերն անխառն ուրախություն էին պատճառում հայ գրասերին, երբ հերթական անգամ հայտնվում էին Հ. Չարխչյանի գրքերը: Իրեն բնորոշ վարպետությամբ Հ. Չարխչյանը մի քանի բառով կարողանում

է ստեղծել համայնապատկերներ, որոնցում ընթերցողը կարողանում է տեսնել և՛ սիրակարոտ Սուլային, և՛ իր սիրով ու պատանեկան խանդավառությամբ հոգին լցրած Սևակին: Գույներն ու երանգները շատ շարժուն են: Զգացվում են հոգեբանական ապրումներն ու մտավախությունները, թաքնված հույզերն ու զգացմունքները. «Փողոցներում ձյուն չկար: Կար թափանցիկ մի մերկություն, ցրտից կուչ եկած ձայների արձագանք, և բառեր, որ մնացին ներսում՝ ծրարված ու լքված» [11, էջ 316]:

ԳԼՈՒԽ Բ

«ՉԱՐԵՆՑԻ ԿՐԱԿՈՑԸ» ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԸ

Դու ամեն վայրկյան քեզ ժխտում ես
Ու այդպես ժխտելով հաստատում.
Պարտվում ես դու քեզ ու հաղթում ես
Սակայն միշտ՝ այդ դու ես- ու դու:
Ե. Չարենց

Հ. Չարխչյանի տարերքը գրականությունն էր, ուներ գրողական անժխտելի ձիրք, ընկալունակ ու սուր դիտողականություն: Իր գրական գործունեությամբ Հ. Չարխչյանը մեզ տվեց ժամանակի նորոգված և արդիական զգացողությունը, դարի հետ համաքայլ ընթանալու վստահություն, մեծ անհատականությունների բարդ ու համադրական կերպար, մտածողության ինքնատիպ համակարգ: Ճիշտ է, Հ. Չարխչյանի ստեղծագործության էջերում կան ժամանակակից կյանքի նկատմամբ իրատեսական թափանցումներ, սակայն ստեղծագործությունների գլխավոր շեշտը վերադարձն է դեպի իր մեծ անհատականությունների կենսագրության, անցած ճանապարհի կայարանները: Սրանք հոգևոր կենսագրության տարածական-ժամանակային այն սահմաններն են, որոնց հղումներով Հ. Չարխչյանը մարմնավորում է իր գեղարվեստական-բարոյախոսական խնդիրները: Գրողը համընթաց զուհագեռներով ներհյուսում է ընդհանուրն ու մասնավորը: Եվ դա այնպիսի վարպետությամբ, որ իրենց ամբողջ նկարագրով նրանք, գրեթե նույնը լինելով, տարբեր են ու առանձնահատուկ: Իր հերոսների խոսք ու զրույցով գեղարվեստական խոսքի հարուստ ու կենսունակ պաշարներ է բերում Հ. Չարխչյանը:

2010 թվականին Երևանում տպագրվեց նույն հեղինակի «Չարենցի կրակոցը» փաստագրական վեպը /ենթաժանրային բնութագրումը հեղինակինն է/: Բոլորն էլ մեր հռչակավոր բանաստեղծների կենսագրության տարբեր դրվագների հիման վրա գրված երկեր են, ըստ էության, կենսագրական վեպեր, ստեղծված վավերականի և գեղարվեստականի համադրությամբ՝ հեղինակի նախընտրած տարբերակով:

Հ. Չարխչյանի «Չարենցի կրակոցը» կենսագրական վեպում վճռական դերակատարություն են ունեցել տպագրված փաստական նյութերը, մեր հանճարեղ բանաստեղծի մասին ժամանակակիցների հուշերը և այլն: Կենսագրական վեպը,

ինչպես հայտնի է, ենթադրում է վավերականի ու գեղարվեստականի համադրություն, հետևաբար անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի ներդաշնակությամբ են համատեղվել դրանք այս ստեղծագործության մեջ: Այս կենսագրական վեպում հեղինակի կողմից ընտրված փաստանյութերի օգտագործման հիմքում Ե. Չարենցի կյանքի հերթական, դրամատիզմով հագեցած շրջանի՝ 1926-1927 թթ. գեղարվեստականացված պատմությունն է: Բանաստեղծի կենսագրության այս հատվածի պատումի շրջանակում բացահայտվում են նաև նրա որոշ երկերի / «Երևանի Ուղղիչ տնից» /մամուլում առաջին անգամ տպագրվել է «Հիշողություններ Երևանի Ուղղիչ տնից» վերնագրով/, ռուբայիներ, «Ձիու մռութ» և այլն/ ի հայտ գալու իրական ու հոգեբանական նախապատճառները: Նշանավոր անձնավորության մասին կենսագրական վեպը գայթակղիչ է և մեծ հետաքարքրություն է առաջ բերում արդեն իր փաստագրական-վավերականության շնորհիվ: Այս դեպքում ընթերցողին ձգում և հրապուրում է և՛ մեր հանճարեղ բանաստեղծի կյանքի վավերական դեպքերի տիրույթում նրան առտնին վիճակներում տեսնելու և թե՛ նրա հետ շփվող կամ առնչվող ճանաչված մտավորականների, գրողների /Ա.Բակունց, Գ.Մահարի, Մ.Արմեն, Ն.Զարյան, Շ.Կուրղինյան, Մազմանյան, Արուտչյան և ուրիշներ/ ներկայությունը նրա շրջապատում: Այստեղ շատ կարևոր են, նաև Մարիաննա Այվազյանի վրա կրակոցի հետ կապված դեպքերի իրական արձագանքների ու քարոզչական նպատակներով սփյուռքահայ մամուլում տպագրված հոդվածներում եղելության արծարծումների վկայակոչումները: Հեղինակը արխիվներում կատարած որոնումների ընթացքում ի հայտ է բերել նաև նոր կենսադրվագներ, շրջանառության մեջ է դրել սփյուռքահայ մամուլում /«Հուսաբեր» /Կահիրե/, «Հառաջ» /Փարիզ/, «Հայրենիք» /Բոստոն/, «Նոր աշխարհ» /Նյու Յորք/ / 1926-1927 թթ. տպագրված նյութերը: Հեղինակն օգտագործել է նաև ժամանակակիցների հիշողությունների երեք ժողովածու, անկախության տարիներին հրապարակված մահափորձի առթիվ կազմակերպված դատավարության փաստաթղթերը, արձանագրությունները: Վերոհիշյալ և այլ վավերագրական տպագիր ու ձեռագիր նյութերը ներկայացված են գրքի «Օգտագործված աղբյուրների ցանկում»: Չարխչյանը նոր փաստանյութերի հիման վրա հավաստում է, որ Չարենցը, երբ արդեն գտնվում էր Երևանի Ուղղիչ տանը, կնոջ՝ Արփիկի հետ 1926 թ. Լենինականում /այժմ Գյումրի/ տեղի ունեցած

երկրաշարժի ժամանակ եկել է Գյումրիում, այստեղ հանդիպել աղետից տուժածների թվում նաև բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանին: Կան այլևայլ նոր, քիչ հայտնի կենսադրվագների նկարագրություններ: Վեպում թեև նկարագրվում են գրեթե մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած իրողություններ, բայց և այնպես, բնականաբար, անդրադարձ է կատարվում նաև անցյալի դեպքերին՝ ըստ հանգամանքների և անհրաժեշտության:

Երիտասարդ աղջկա վրա կրակելու անսովոր դեպքը դարձնելով կենտրոնական թեմա՝ հեղինակի նպատակն է եղել բացահայտել Չարենցի բնավորության, պահվածքի, հոգեբանության, ներաշխարհային ապրումների արտահայտությունները նաև ենթագիտակցությունից ու անգիտակցականից եկող ազդակների ներգործությամբ, ինչը բնորոշ է նաև սովորական մարդուն: Իսկ մեծերի մեջ սովորականից շեղվող արարքները ևս դրսևորվում են արտառոց կերպով:

Ժամանակի չափումների մեջ Ե. Չարենցի հոգևոր կենսապատումը տեսլանում է և' որպես աներկրորդ գեղարվեստ, և' իր օրերի պատմությունը խորհրդանշող երևույթ: Դեմ հանդիման են հոգևոր պատմության սկիզբն ու վերջը՝ շաղկապված դժվարուղի մաքառումներով, գաղափարագեղագիտական վերաճշտումներով:

Չարենցի ներաշխարհային ապրումների, մտորումների հեղինակային բացահայումները մղում են կարծելու, որ Չարխչյանն այս երկում ստեղծել է բանաստեղծի կերպարի իր վարկածային տարբերակը: Հեղինակին հաջողվել է անհատականացնել նրա կերպարը թե՛ իր արարքներով և թե՛ բարոյահոգեբանական նկարագրով, գիտակացական ու ենթագիտակցական ներսուզումների արտահայտություններով: Երբեմն անհավասարակշիռ, սեռական բնազդի, հոգեբանական այլ մղումների տարերային դրսևորումներով նրա վարքագիծը ցուցադրելով՝ Չարխչյանը մի որոշակի չափով արդարացնում է ընթերցողի սպասելիքները: Դրան նպաստում է այն, որ հեղինակն իրականում կատարվածի մասին որքան հնարավոր է փաստական-վավերական հիմքով է ստեղծել կերպարի հոգեբանությունը և գեղարվեստական միջավայրը: Իսկ կրակոցից հետո /այն թեթևակի վնասվածք էր հասցրել Մ.Այվազյանին/ ձերբակալված Չարենցի պահվածքի բնականությունը, քննիչ Գ.Գրիգորյանին տված խոստովանությունների

անկեղծության չափը, մեղքի գիտակցումը, դատավարությունից հետո պատժի արդարացի լինելն ընդունելը Չարենցի բնավորության անհատականացման կարևոր ցուցիչներ են: Դրանց առթած հերոսի ներքին, վիպական մտորումները, կարելի է նաև համարժեք համարել: Հոգեբույժ բժիշկների կողմից Ուղղիչ տանը կատարված հոգեբանական զննումներից հետո անմեղսունակության վարկածի հիմնավորումը հաստատող փաստաթղթի կապակցությամբ Չարենցի վերաբերմունքն իր հերթին նպաստում է որոշակի նրբագծեր ավելացնելու մեծ բանաստեղծի և կենցաղային մարդու նրա կերպարին: Իբրև մեղմացուցիչ հանգամանք Չարենցն ինքը չի ընդունում բժիշկների կատարած եզրակացությունը, որի համար հիմք ու նախապատճառ էին համարվել Առաջին աշխարհամարտի ժամանակ որպես կամավորական պատերազմին մասնակցելու, կոտորածներին, կռիվների զարհուրելի տեսարաններին ականատես ու մասնակից լինելու իրողությունները: Իբրև ուղղամիտ ու անմիջական, անկեղծ ինքնարտահայտվելու հակված հոգեբանական խառնվածք ունեցող անձնավորություն՝ հեղինակը համոզում է, որ Չարենցն ազնվորեն ընդունում էր իր մեղքը և պատրաստ էր կրելու օրենքով նախատեսված պատիժը:

Չարենցի ինքնաբուխ, պոռթկուն անկեղծությունն ու անմիջականությունը արտահայտվել է և՛ բնազդային հակումների մեջ և՛ թե գիտակցված կերպով բարոյական արժեքները պահպանելու հանդեպ: Այդ մասին են վկայում հատկապես կնոջ՝ Արփիկի նկատմամբ զղջման զգացողության դրսևորումները, վերջինիս մահվան ժամանակ ու թաղումից հետո իր խելահեղ, ինքնամոռաց ու ծայրահեղությունների մղող պահվածքը, որ պատկերված է մահացած կնոջ շորերն այրելու, նրա ձեռքի ու դեմքի գիպսե պատճենները պատրաստել տալու, գերեզմանաքարը բերելու տպավորիչ դրվագներում: Արփիկի բացակայության շրջանում դերասանուհի Նվարդ Ալիխանյանի և հատկապես օրիորդ Մ. Այվազյանի հանդեպ կարճատև հրապուրանքների, սեռական հաճույք ստանալու ակնկալությունների ու հակումների համեմատ Արփիկի հանդեպ անմար սիրո զգացմունքն իր բարոյական գերակայության շնորհիվ մեծ բանաստեղծին շարունակում է պահել կյանքն ավելի հավասարակշռված հայացքով գնահատելու հոգեվիճակում: Եվ ահա ծնվում է նաև այդ միջադեպի գեղարվեստական անդրադարձը՝ «Ձիու մռութ» բանաստեղծությունը:

Ուշագրավ են Չարենցի կրակոցի, դատավարության, բանտարկվելու /Երևանի Ուղղիչ տանը հայտնվելու/ իրողությունների մասին սփյուռքահայ մամուլի ոչ համարժեք արձագանքների վկայակոչումները ժամանակի մամուլից քաղված նյութերով մատուցումը: Ազգային կուսակցությունների ներկայացուցիչներն ու թերթերի աշխատակիցներն առիթն օգտագործում են մի նոր դիտանկյունից քննադատելու Խորհրդային Հայաստանում հաստատված կարգերն ու իշխանություններին: Նրանց մեջ առանձնանում է ճանաչված գրող, լրագրող Զ. Եսայանը, ով, ներկա գտնվելով դատավարությանը, առավելապես իրատեսորեն է ներկայացնում իրողությունը՝ չթաքցնելով իր բարյացակամ վերաբերմունքը Չարենցի նկատմամբ, ում հետ ծանոթացել էր դեռևս Փարիզում:

Հ. Չարխչյանը, օգտվելով Չարենցի դատավարության պահպանված և տպագրված նյութերից, կարողացել է տեսանելի դարձնել 1920-ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող դատավարական գործընթացը նաև իր այս բացառիկ դեպքով: Ակներև է, որ այն հրապարակայնությունն ու մարդասիրական ինչ-ինչ կողմեր պահպանել էր, մանավանդ, երբ համեմատում ենք 1930-ական թթ. երկրորդ կեսի, մասնավորապես 1937 թ. ընթացքում տեղի ունեցած դատավարությունների հետ, որոնք անհատի պաշտամունքի ստալինյան քաղաքականության շրջանում անխնա կերպով ոչնչացրեցին ժամանակի նշանավոր բազմաթիվ հայ մտավորականների, այդ թվում նաև Չարենցին: Այս առումով բնութագրական է այն, թե ինչպիսի սրտացավությամբ է դատապաշտպան Ե.Չուբարը արտահայտվում կատարվածի կապակցությամբ իր պաշտպանական խոսքում՝ արտահյտելով իր և Չարենցի պոեզիան բարձր գնահատողների վերաբերմունքը տեղի ունեցածի նկատմամբ. «կարծում եմ, բոլորդ էլ ինձ հետ կհամաձայնեք, որ այսօր մեղադրյալի աթոռին նստած է ոչ թե ինչ-որ մի գրպանահատ, ավարառու կամ դրամաշորթ, ոչ թե դասակարգային թշնամի կամ ահաբեկիչ, այլ մի մարդ, ով իրերի բերմամբ ինքն էլ զոհ է և տուժող: Հանգամանքների, մոլորությունների, ծայրահեղ ապրումների զոհն է իմ պաշտպանյալը: Մեղադրվում է մեկը, ով այս հասարակարգի ու երկրի կառուցման առաջամարտիկն է, մարտնչել է ճակատում, իր ողջ տաղանդը, գիտելիքները, եռանդն ու գրիչը անմնացորդ նվիրաբերել է նոր կարգերի հաստատմանն ու կայացմանը: Եվ եթե օրենքի առաջ ամենքս հավասար ենք, ապա

նույն այդ արդարադատ օրենքը մի՞թե առանց վարանումի հավասարության նշան կդնի ինչ-որ համբակի ու Չարենցի միջև: Ես ուզում եմ հավատալ, որ այդ բանը չի պատահի, այլապես նման վճիռը գուցե և անաչառ համարվի, սակայն չի կարող լինել շրջահայաց… Մենք դատում ենք Չարենցին՝ մեր ժամանակակից ամենամեծ հայ բանաստեղծին: Իհարկե, կարող ենք հենց հիմա օրենքի տառին ենթակա մի որոշում կայացնել, բանտ ճանապարհել նրան և հետո հանգիստ խղճով լքել այս դահլիճը: Ո՞վ կասի, թե մեղանչած կլինենք մեզ վերապահված իրավունքի առաջ: Սակայն ես ձեզ ամենայն պատասխանատվությամբ վստահեցնում եմ, որ կգա մի օր, երբ մենք կզղջանք այդ հանգստության համար: Եթե կուզեք կարող եք այժմ ասել, թե ես խտացնում եմ գույները, թե չափազանցության գիրկն եմ ընկել, թե խղճմտանք եմ արթնացնում ձեր մեջ: Բայց հավատացեք՝ անպայման գալու է այդ օրը, երբ բոլորս, անխտիր բոլորս կկանգնենք մեկ այլ՝ առավել ահեղ դատարանի առաջ, որի անունը կլինի Ժամանակ ու Պատմություն: Եվ այդ դատարանում արդեն ներողամտության պակասի համար մեզ չեն ների…Լսու՞մ եք, չեն ների…Դահլիճը մեկեն ցնցվեց ու պայթեց ծափերից» [9, էջ 358-359]: Մարդասիրական ու ներողամիտ վերաբերմունք Չարենցի նկատմամբ դրսևորվեց նաև Ուղղիչ տանը գտնվելիս, կնոջ մահվան կապակցությամբ: Նրա հանդեպ բարյացկամ վերաբերմունք է դրսևորվել նաև ժամանակի պետական բարձր պաշտոնյաների կողմից /Ա.Հովհաննիսյան, Ա.Մռավյան/: Իշխանության ներկայացուցիչները թույլատրում են տեսակցելու ծանր հիվանդություն ունեցող Արփիկին հիվանդանոցում, մասնակցելու նրա թաղմանը: Հատկապես ազդեցիկ ու տպավորիչ է նկարագրված կնոջ մահվան առաջ բերած ապրումները, գերեզմանոցում նրա ողբը, ուշակորույս վիճակը, հետագայում գերեզմանաքարը բերելու հետ կապված միջադեպը:

1926-1927 թթ. գրական կյանքի որոշ կողմերի մասին պատկերացումը ստեղծվել է Չարենցի կրակոցի և դրանով պայմանավորված գրողների՝ նրա նկատմամբ դրսևորված վերաբերմունքի շնորհիվ: Այս շրջանում Չարենցի մտերիմներն էին երիտասարդ գրողներից Ա.Բակունցը, Գ.Մահարին, Մ.Արմենը, Վ.Նորենցը: Նրանք թեև հաճախ են հայտնվում տարբեր դրվագներում, սակայն իրենց արժանի հոգեբանությամբ ու մարդկային նկարագրով լիարժեք չեն ներկայանում իբրև գրական կերպար: Բայց և այնպես, նրանց հետ շփումներում Չարենցի կերպարն է

բացահայտվում այս կամ այն կողմով: Նրանք «Նոյեմբեր» միության անդամներ էին, հետևաբար Չարենցի մտերիմներն էին, իսկ ՀՊԳԱ-ի անդամների՝ Ն.Զարյանի, Ա.Վշտունու, Վ.Ալազանի նկատմամբ նրա վերաբերմունքը բացասական էր: Ամեն դեպքում նա իսկական գրականության շահերի դիրքերից էր գնահատում գրողներին, ուստի այս երկու գրական խմբավորումների միջև ծագած հերթական առճակատման առիթով Չարենցն ասում է. «Չհուսահատվեք: Նրանք կընտրվեն, պաշտոններ ու դիրք կզբաղեցնեն, բայց մարդիկ դարձյալ մեր գրքերը կկարդան: Ես եմ ձեզ ասում» [9, էջ 212]:

Չարենցի բնավորության, խառնվածքի, աշխարհընկալումների բարդությունը, հակասականությունը, կենսակերպի ուրույն բազմազանությունն ու փիլիսոփայական մտածողությունը իմաստասիրական խորհրդածություններով թերևս ավելի խտացված ու բանտում գրած նոր ստեղծագործությունների հետ համահունչ է արտահայտվել տասներորդ գլխում /«Խռոված ընդերք»/: Ուղղիչ տանը Զ. Եսայանը հանդիպում է բանաստեղծին, զրուցում հոգեշահ թեմաների շուրջ, հետաքրքրվում է բանտում նրա գրած ստեղծագործություններով: Չարենցը կարդում է այստեղ գրած ռուբայիները, որոնք նորություն էին նրա պոեզիայում: Դրանցում բանաստեղծը վերաիմաստավորում էր իր կյանքի դառը փորձը, իմաստասիրական խորհրդածություններով, վերջին միջադեպի հարուցած հետևանքների առաջ բերած մտորումներով գիտակցում կեցության հարափոփոխությունն ու անհատի ճակատագրի անկայունությունը:

Հ. Չարխչյանը հետամուտ է ժամանակակից վիպասացության ձևաբովանդակային նոր միտումների յուրացմանը:

Այսպիսով, ակներև է, որ Հ. Չարխչյանը թե՛ Պ. Սևակի, թե՛ Ե. Չարենցի կերպարները ստեղծելիս գնացել է բարդ ու մեծագույն աշխատանք պահանջող ճանապարհով: Կարծում ենք՝ նրա կենսագրական վեպեր ստեղծելու վերոհիշյալ ինքնատիպ փորձերը խոստումնալի ձեռքբերումներ են և կունենան շարունակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հ. Չարխչյանը ոչ թե սովորական ձևով պատմում է, այլ ներկայացնում, կենդանագրում, մանրամասներով ստեղծում ամբողջի տեսանելի պատկերը: Արձակագիրը կարողանում է բնականորեն վերարտադրել հոգեվիճակն ու զգացողությունը: Նա ստեղծեց գեղարվեստական արձակի ժամանակակից պատում, ժամանակակից կշռույթ, ժամանակակից լեզվամտածողություն: Հ. Չարխչյանի կենսագրական վեպերը յուրօրինակ խնկարկման ծես են՝ նվիրված հայ մշակույթին ու արվեստին:

Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու ապագային, երբեք չպետք է կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբն ու ընթացքը, երեկն ու այսօրը, պատմությունն ու արդիականությունը:

Հայ գրողի և հայ մարդու վերադարձը դեպի իր անցյալը խոսում է ժողովրդի և նրա գրականության կենսունակության մասին:

Թեման ուսումնասիրելիս մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Հ. Չարխչյանն իր հերոսների անցյալ կյանքը տեսնում էր ներկա օրվա միջով: Այդ կողմնորոշումն առկա է նրա գրեթե բոլոր գործերում:
2. Անցյալի ու ներկայի միասնությունը ձևավորում է Չարխչյանի ստեղծագործության համար այնքան կարևոր նշանակություն ունեցող ժամանակների կապը, որը ժամանակային պարզ հաջորդականությունից վերածվում է հերոսների ներաշխարհն ու հեղինակային հայեցակետը բացահայտող զգացմունքային կապի: Ահա այս ժամանակների կապն է, որը թե՛ սյուժեով, թե՛ ասելիքի իմաստային ուղղվածությամբ կառուցում է արձակագրի գրեթե բոլոր գործերը:
3. Չարխչյանի ստեղծագործությամբ հայ արձակի մեջ հաստատապես մուտք գործեց այն անիմանալի, անբացատրելի երակը, խորապես ինքնատիպ հերոսների վարքը, բնավորությունը, որոնք իրար են գալիս՝ նշանավորելով ազգային հոգեբանություն:
4. Գրողը գունեղ երանգավորումներով կենդանագրում, նաև կերպավորում է մեծ անհատականություններին:

5. Հ. Չարխչյանը պատմում է իր հերոսների կյանքը՝ միավորված իր հերոսներին: Նրա ստեղծագործության մեջ առարկայական որոշակիությունը սահուն ու աննշմար կերպով փոխարկվում է ոգեղեն այլագոյության, ներշնչանքն իր սկզբնաղբյուրից, իր բնօրինակից աճում ու վերաճում է երևակայության ազատ թռիչքների: Տեսողությունն ու մտքի հայացքը միասնաբար են ընկալում ու վերարտադրում երևույթը, շարժումը, գոյությունը: Իրական պատումի մեջ հանկարծ կենդանանում է երևակայության տեսիլքը, մտքի ճառագայթը դառնում է կրակ, որը և՛ երևում է, և՛ չի երևում, և՛ կարմիր է, և՛ կապույտ, և՛ լույս է , և՛ ծուխ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մենագրություններ, ուսումնասիրություններ, բնագրեր

1. Արիստակեսյան Ա., Պարույր Սևակ, Երևան, 1984թ., 400 էջ, էջ 297-298:
2. Աստվածաշունչ, Հին և Նոր Կտակարաններ, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 1424:
3. Բախչինյան Հ., Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի, Ե.,1997:
4. Գասպարյան Դ., Պարույր Սևակ. Կյանքը և Ստեղծագործությունը, Երևան, «Նոր դար», 2001, 464 էջ:
5. Գասպարյան Դ.,Ողբերգական Չարենցը, Ե.,1990:
6. Գասպարյան Դ, Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծությանմայրաքաղաքը, Ե., 1996:
7. Գասպարյան Դ, Չարենցի հետ, Հուշեր, Ե., մաս 1-ին,մաս 2-րդ, 1997, 2008:
8. Գասպարյան Դ, Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը, Ե., 2003:
9. Չարխչյան Հ., Չարենցի կրակոցը, Երևան, Տիգրան Մեծ, 2010, 607 էջ:
10. Չարխչյան Հ., Սուլամիթա. Սևակի մեծ սերը, Գիրք 1, Երևան, Անտարես, 2014, 325 էջ:
11. Չարխչյան Հ., Սուլամիթա. Սևակի մեծ սերը, Գիրք 2, Երևան, Անտարես, 2014, 432 էջ:
12. Նավասարդյան Վ., Չարենց: Հուշեր և խորհրդածություններ,Ե.,2007:
13. Սևակ Պ., Երկերի ժողովածու, Երևան, 1974թ., հ. 5, էջ 335 էջ:
14. Սևակ Պ., Մարդը ափի մեջ, Երևան, Հայպետհրատ 1963, 433 էջ:
15. Սարինյան Ս., Պարույր Սևակ (բանաստեղծության գիտությունը), Երևան «Գրական հայրենիք», 2006, 208 էջ:
16. Սողոմոնյան Ս., ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, 1967թ., հ. 2, էջ 494 :
17. Քալանթարյան Ժ.,Ուրվագծեր արդի հայ գրականության,Երևան, 2006: